ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

№ ԱԵ//30022-2022

8 Նոյեմբերի 2022թ.

«Գլավդորստրոյ» ԲԸ-ի տնօրեն
Ս. Պետրոսյանին
ՌԴ, ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1, բն. 4
ՀՎՀՀ 7729511888
glavdorstroy.ao@inbox.ru

Հարգելի՛ պարոն Պետրոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 26.08.2022թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/15Շ» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կապալառուի կողմից ներկայացվել են Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Գլավդորստրոյ» ԲԸ-ին ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ: Համաձայնագիրը սահմանված ժամկետում հաստատվել է Կապալառուի կողմից և ներկայացվել է Պատվիրատուին, սակայն միաժամանակ ներկայացված պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման բանկային երաշխիքները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պայմաններին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթով՝ Պատվիրատուի կողմից չեն ընդունվել նշված երաշխիքները և «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/15Շ» ծածկագրով Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Հայտնում ենք, որ «Գլավդորստրոյ» ԲԸ-ի նկատմամբ կկիրառվեն ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 և 900008000664 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

11/8/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. Երիցյան

Կատարող՝ Գնումների համակարգման բաժնի պետ, Մ. Փարսադանյան
Հեռ. 010511328